

Երանի ~ Արմենի ՆՃԱՆՆԵՐՈՒՆ...

8 Նոյեմբեր 2005
Երուսաղէմ

Հ.Ս.Ը.Մ.ի թէ Հ.Ս.Ը.Մ.ի
նման բոլոր Հայ
կազմակերպութեանց
գլխաւոր մարտահրաւերը
Հայ երախաներու թէ
պատանիներու որպէս մարդ
թէ որպէս Հայ
դաստիարակութիւնն է:

Ի դիմաց 21րդ դարու
արեւմտեան անլացած
մշակութային էլէքթրոնային
հոսանքին, որը դաւազլոր կը
տանի ամբողջ սերունդներ.



Եղբ. Արմէն Ալէմեանը:

Ի դիմաց ընդհանրապէս բոլոր ընկերութեանց մէջ բարոյական թէ
նկարագրային ըմբռնումներու մտահոգիչ նահանջին.

Եւ վերջապէս ի դիմաց ազգային թէ ընտանեկան արժէքների թէ
սրբութեանց նկատմամբ մեր ցուցաբերած դատապարտելի
անտարբերութեան- այսօր, Երուսաղէմի Հ.Ս.Ը.Մ.ը նման բոլորին կը
դիմագրաւէ անելի լուրջ ճակատ:

Արդարեւ, դիմագրաւելի մարտահրաւերի լրջութեան կատարեալ
գիտակցութեամբ մասնաճիւղս կը գործէ իր բոլոր քատրերու ու ուժերու
առաւելագոյն լառումով:

Այս քատրերու նօսր շարքին կը փայլի մեր բոլորին, յատկապէս
փոքրերին, սիրելի Արմէնը, 17ամեայ, որը իր ազատ ժամերն ամբողջ կը
տրամադրէ Հ.Ս.Ը.Մ.ի փոքրերի Ֆուտպոլի խումբի մարզումին:

Կարելի չէ չնկատել խանդաւորութիւնը Արմենի շուրջ բոլորուած
պատանիներուն, որոնք պահ մը ակումբն են գրատախտակի առաջ իրենց
անելիքը ծրագրելով, յաջորդ պահուն դաշտն են խաղի թէ փորձի
վազվզութիւն:

Այս բոլոր երուզերին անմասն չենք մնար նաեւ մենք մեծերս,
նուազագոյնը Արմենի անունը քանի մը անգամ մեր տան մէջ կ'արձաքանգէ,

"Պապա եղբ. Արմէնը ըսաւ այսօր փորձ ունիմ"

*"Պապա եղբ. Արմէնը ըսաւ թէ պէտք է ժամը 2:30ին անպայման դաշտը
ըլլամ"*

*"Պապա այլեւս փորձի պիտի չերթամ, եղբ. Արմէնը ինձ հազիւ թէ տասը
վայրկեան խաղցուց"*

"Պապա խօսիր եղբայր Արմէնին խաղի ատեն ինձ ու Կիրոյին չ'նոռնայ"

"Պապա եղբ. Արմէնէն զատ ուրիշը չ'ունինք"

"Չէ տղաս եղբ. Արմենը ոչ թէ յարմարգոյննէ այլ լաւագոյնն է"

Եւ իրօք եղբ. Արմենը բացառիկ տաղանդով թէ հմտութեամբ կը յաջողի շրջացնել երեխաներու յաճախ արդար բողոքը ու ցասումը վերածելով այդ խանդի ու երանդի շարունակելով իր՝ աւելին մասնաճիւղին, առաքելութիւնը:

Մասնաճիւղիս վարչական տոմարը եղբ. Արմեն Ալէմեանի հասցեագրեց գնահատական խօսք ու աւելին:



Եղբ. Արմեն Ալէմեան իր սիրելիներու գլխին: